Ծուշանիկ Կուրղինյան

Լսի՛ր

Տնքում են սար, ձոր, ծիլ, ծաղիկ ու խոտ .
Քամին՝ կաղկանձում . բուն վայ է տալիս .
Ծով, գետ ու առվակ՝ պղտոր, արյունոտ
Դիակներ բարձած– գնում են գալիս:

Լսի՛ր .
Վերքն է մրմնջում . . սրտերը՝ քաղցած
Ունեն մեծ պայքար, որ խոր թափանցեն,
Ուտեն՝ ապրելու, դիակի հյուծված
Ներքին աշխարհը, սիրտը շուտ անցնեն:

Լսի՛ր .
Մարմինն է տնքում փոր հացի համար՝
Անառակության մեջ լլկված վաղաժամ .
Եվ ատամների կրճտոցն անդադար
Անեծք է թափում՝ որ ծախվեց էժան:

Լսի՛ր .
Երկունքը մոտ է . ամեն խաղերից
Ոսկորն է շաչում . և մի վայրկյանի
Մի անասնական անհագ մրրկից
Աշխարհ է գալու քաղցած կենդանի:

Լսի՛ր .
Լուռ արածում են մարդ և անասուն .
Անբան կենդանին գոյության համար,
Անխոս զարմանքի ձգած վայնասուն
Մարդուն խոտակեր արավ արնահար:

Լսի՛ր .
Հանքը փուլ եկավ . կամ կաթսան պայթեց .
Մի մեծ փոսի մեջ լեշեր թաղեցին .
Դիակը՝ ճոճաց . լեզուն դուրս կախվեց .
Տրորված գանգեր ծովը նետեցին:

Լսի՛ր .
Շղթան է զնգում, հաստ ամուր շղթան,
Կաղապարը՝ արդար իրավունքների .
Տենչերը ըմբոստ, բողոքը՝ մարդկան
Տանում է հեռու՝ ճարակման գերի:

Լսի՛ր .
Մի՛ սոսկար . քաջ կաց . բռնակալության
Ծաղկոտ, վառ գարնան փառքն է այսօր,
Վերքերը՝ խորունկ . ոճիրն անխափան .
Արյան հեղեղը՝ ալիքներ բոսոր:

Լսի՛ր .
Չփախչես . կանգնիր, հենվիր իմ ուսին .
Շուտով վրեժի կուգա ցուրտ ձմեռ .
Եվ կթառամեն նոր արշալույսին
Նախճիր, բռնություն մինչ այժմ անմեռ:

Լսի՛ր .
Չէ՛, չոքի՛ր, շուտ . սուս, բազկատարած,
Երկունքի մեջ է կյանքը, մարդկություն,

Քիչ էլ, կծնի ազատն աստված՝
Մտքերի զարուն հավասարություն . . .

1907 թ. 29 ապրիլի